Տեղեկանք

Արտարժութային պետական պարտատոմսերով գործառնություններ իրականացնելու նպատակով «Cleary Gottlieb Steen & Hamilton LLC» ընկերության հետ 2019 թվականի հուլիսի 18-ին կնքված միջազգային իրավախորհրդատուի ծառայության ձեռքբերման պայմանագրի վերաբերյալ

Արտարժութային պետական պարտատոմսերով գործառնություններ իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը «Cleary Gottlieb Steen & Hamilton LLC» ընկերության հետ 2019 թվականի հուլիսի 18-ին կնքել է միջազգային իրավախորհրդատուի ծառայության ձեռքբերման պայմանագիր: Պայմանագրի ընդհանուր արժեքը, ներառյալ ՀՀ հարկերը, կազմում է 400,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, որից 320,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամը նախատեսվում է «Cleary Gottlieb Steen & Hamilton LLC» ընկերության կողմից տրամադրվող ծառայությունների դիմաց վճարելու համար, իսկ 80,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամը՝ այդ ծառայությունների մատուցման դիմաց հաշվարկված եկամտի վճարման աղբյուրի մոտ հարկային գործակալի կողմից պահման ենթակա շահութահարկը հարկատուի անունից Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարելու համար:

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝

Արշալույս Մարգարյան